Բյուրեղաքարե վարսակալ

հեղինակ՝ Արթուր Կոնան Դոյլ

թարգմանիչ՝ Հովհաննես Գեւորգի Ղուկասյան

— Հապա նայեք, Հոլմս, — ասացի ես։ — Ինչոր խելագար է վազում։ Չեմ հասկանում, ինչպես են հարազատները նրան թողնում առանց հսկողության։

Կանգնել էի մեր սենյակի կամարաձև պատուհանի մոտ և նայում էի Բեյքր սթրիթին։

Հոլմսը ծուլորեն վեր կացավ բազկաթոռից, կանգնեց իմ ետևում և ձեռքերը դնելով խալաթի գրպանները, նայեց պատուհանից դուրս։

Փետրվարյան պարզ օր էր։ Երեկ տեղացած ձյունը փայփլում էր ձմեռային արևի շողերից։ Փողոցի մեջտեղում ձյունը վերածվել էր գորշ կեղտոտ զանգվածի, սակայն ճամփեզրին մնացել էր ճերմակ, ասես հենց նոր էր տեղացել։ Չնայած մայթերն արդեն մաքրել էին, այնուհանդերձ դեռ շատ սայթաքուն էին, և հետիոտները փողոցում սովորականից ավելի հազվադեպ էին։ Անցուղուց մինչև մեր տուն ձգվող փողոցի վրա այժմ միայն մի մարդ կար։ Նրա արտառոց արարքն էլ հենց գրավել էր ուշադրությունս։

Հիսուն տարեկան տղամարդ էր, բարձրահասակ, ազդու, լայն, եռանդով լի դեմքով և պատկառելի արտաքինով։ Հագնված էր ճոխ, բայց ոչ աչք ծակող. հոյակապ լայնեզր գլխարկ, թանկագին կտորից մուգ սերթուկ, լավ կարված մոխրագույն տաբատ, շագանակագույն զանգապաններ։ Միայն թե նրա ողջ վարվելակերպը չէր համապատասխանում արտաքինին և հագուստին։ Վազում էր ֆիզիկական վարժություններին անսովոր մարդու պես վեր-վեր թռչելով, դեմքը ծամածռելով թափահարում էր ձեռքերը, տարուբերում գլուխը։

— Ի՞նչ է պատահել նրան, — զարմացա ես։ — Կարծես ինչոր տուն է փնտրում։

— Կարծում եմ, այստեղ է շտապում, — ձեռքերը շփելով ասաց Հոլմսը։

— Այստե՞ղ։

— Այո։ Կարծում եմ, որ նրան հարկավոր է ինձ հետ խորհրդակցել։ Բոլոր նշաններն առկա են։ Ճի՞շտ էի, թե ոչ։

Այդ պահին անծանոթը ծանր շնչելով նետվեց դեպի մեր դուռն ու սկսեց տենդագին ձգել զանգակը՝ տունը լցնելով զանգահարությամբ։

Մի րոպե անց, հազիվ շունչը տեղը բերելով և զանազան շարժումներ անելով նա սենյակ ներխուժեց։ Աչքերում այնպիսի վիշտ ու հուսահատություն էր թաքնված, որ մեր ժպիտները մարեցին, ու քմծիծաղը փոխվեց խոր կարեկցանքի ու խղճահարության։ Սկզբում չկարողանալով արտասանել ոչ մի բառ, խելագարության սահմանը հասած մարդու նման բռնել էր գլուխն ու միայն ետ ու առաջ էր ճոճվում։ Հանկարծ նետվեց դեպի պատն ու գլխով հարվածեց։ Նետվեցինք դեպի այցելուն և քարշ տվինք սենյակի կենտրոնը։ Հոլմսը դժբախտին նստեցրեց բազկաթոռին, ինքը նստեց դիմացը, ափով հարվածեց նրա ձեռքին և այնպես մեղմ ու հանգստացնող տոնով խոսեց, որն իրենից բացի ոչ ոք չէր կարող։

— Դուք եկել եք ինձ մոտ, որպեսզի պատմեք, թե ձեզ ինչ է պատահել, — ասաց նա։ Դուք ուժասպառ եք եղել արագ վազքից։ Հանգստացեք, հավաքեք ձեզ, և ես հաճույքով կլսեմ ինչ որ պատմեք։

Անծանոթին հարկ եղավ մեկ-երկու րոպե, որպեսզի հաղթահարի հուզմունքն ու ուշքի գա։ Վերջապես, թաշկինակով սրբեց ճակատը, վճռականորեն սեղմեց շրթունքներն ու շրջվեց մեր կողմը։

— Դուք, իհարկե, ինձ խելագարի տե՞ղ դրիք, — հարցրեց նա։

— Ոչ, բայց տեսնում եմ, որ ձեզ հետ փորձանք է պատահել, — պատասխանեց Հոլմսը։

— Այո, աստված էլ է տեսնում։ Դժբախտությունն այնքան անսպասելի և սարսափելի է, որ խելագարվել կարելի է։ Ես կտանեի անպատվությունը, չնայած խղճիս վրա ոչ մի բիծ չկա։ Անձնական դժբախտություն պատահում է յուրաքանչյուրի հետ։ Բայց միաժամանակ և՛ մեկը, և՛ մյուսը, այն էլ այսպիսի սարսափելի ձևով։ Բացի այդ, դա վերաբերում է ոչ միայն ինձ։ Եթե անմիջապես ելք չգտնվի դուրս գալու իմ աղետալի վիճակից, կարող է տուժել մեր երկրի ճանաչված անձերից մեկը։

— Անունս, թերևս, հայտնի է ձեզ, — ասաց այցելուն։ Ես Ալեքսանդր Հոլդերն եմ, Թրեդնիդլ-սթրիթի «Հոլդեր և Ստիվենսոն» դրամատնից։

Անունն, իսկապես, մեզ լավ ծանոթ էր, նա պատկանում էր Լոնդոնում իր նշանակությամբ երկրորդ դրամատնային գործակալության ավագ ընկերակցին։ Ինչն էր մայրաքաղաքի հայտնի մարդկանցից մեկին այսպիսի խղճալի վիճակի մեջ գցել։

Անհամբերությամբ սպասում էինք այդ հարցի պատասխանին։ Ուժերի մեծ լարումով Հոլդերը հավաքեց իրեն և ձեռնամուխ եղավ պատմությանը:

— Հասկանում եմ, որ պետք չէ կորցնել ոչ մի րոպե։ Հենց որ ոստիկանական տեսուչը խորհուրդ տվեց դիմել ձեզ, անմիջապես շտապեցի այստեղ։ Բեյքր-սթրիթ հասա մետրոյով և կանգառից սկսած ամբողջ ճանապարհը վազել եմ, այսպիսի եղանակին երկտեղանոց կառքերը շատ դանդաղ են շարժվում։ Ես ընդհանրապես քիչ եմ շարժման մեջ լինում, դրա համար եմ այսպես շնչահեղձ եղել։ Բայց հիմա ինձ լավ եմ զգում և կաշխատեմ բոլոր փաստերը շարադրել որքան կարելի է հակիրճ և պարզ:

Իհարկե, ձեզ հայտնի է, որ դրամատների գործում շատ բան կախված է միջոցների հաջող ներդրման հմտությունից և, միաժամանակ, գործակիցների շրջանակը լայնացնելուց։ Առավել շահավետ միջոցներից մեկը կարողությունների երկարատև ներդրումն է՝ փոխատվություն տալը հիմնավոր երաշխիքով։ Վերջին տարիներին մենք հաջողության ենք հասել այդ հարաբերություններում։ Հարուստ ընտանիքներին վարկ ենք տալիս նկարների, ընտանեկան գրադարանների, սպասքի ապահովագրումով:

Երեկ առավոտյան նստել էի դրամատան իմ աշխատասենյակում, և գրասենյակի գրագիրներից մեկն այցեքարտ բերեց։ Անունը կարդալով ցնցվեցի, որովհետև դա ոչ այլ ոք էր, քան… Նույնիսկ ձեզ մոտ չեմ համարձակվում նրա անունը տալ։ Այդ անունը հայտնի է ողջ աշխարհին։ Անգլիայի բարձրաստիճան և հարուստ անձերից մեկն է։ Շվարել էի ինձ ցույց տված պատվից և, երբ նա ներս մտավ, ցանկացա երախտիքս արտահայտել բարձրաստիճան այցելուին։ Բայց նա ընդհատեց ինձ. նա, երևի, ցանկանում էր որքան կարելի է շուտ հարթել տհաճ գործը:

— Միստր Հոլդեր, լսել եմ, որ դուք դրամական վարկ եք տալիս:

— Այո։ Գործակալությունը վարկ է տալիս հուսալի երաշխիքով, — պատասխանեցի ես:

— Ինձ հույժ անհրաժեշտ է հիսուն հազար ֆունտ ստեռլինգ, ընդ որում, անհապաղ, — հայտարարեց նա։ — Իհարկե, այդպիսի ոչ մեծ գումարը կարող էի պարտք վերցնել ընկերներիցս, բայց նախընտրում եմ այդ փոխատվությունը կատարել գործնական ձևով։ Եվ ստիպված ինքս եմ զբաղվում դրանով։ Դուք, իհարկե, հասկանում եք, որ իմ դիրքի տեր մարդուն անհարմար է այդ գործում կողմնակի անձանց խառնելը:

— Թույլ տվեք իմանալ, որքան ժամանակով է դրամը ձեզ հարկավոր, — տեղեկացա ես:

— Եկող երկուշաբթի ինձ պետք է մեծ գումար վերադարձնեն, և ես կմարեմ վարկը ցանկացած տոկոսով։ Բայց ինձ անչափ անհրաժեշտ է դրամն ստանալ անմիջապես։

— Երջանիկ կլինեի դրամն անխոս տալ իմ անձնական միջոցներից, բայց դա բավականին մեծ գումար է, այնպես որ ստիպված եմ այդ անել գործակալության անունից։ Տարրական արդարամտությունը ընկերակցիս նկատմամբ պահանջում է, որ գործնական նախազգուշական միջոցների դիմեմ։

— Այլ կերպ չի կարող լինել, — ասաց նա և վերցրեց քառակուսի սև սաթե տուփը, որը նախքան այդ դրել էր սեղանին, իր կողքին։ — Դուք անշուշտ, լսել եք հանրահայտ բյուրեղաքարե վարսակալի մասին։

— Իհարկե։ Դա ազգային հարստություն է։

— Միանգամայն ճիշտ է։ — Նա բացեց տուփը, փափուկ վարդագույն թավշի վրա իր գեղեցկությամբ փայլեց ոսկերչական արվեստի հոյակապ ստեղծագործությունը։

— Վարսակալն ունի երեսունինը բյուրեղաքար, — ասաց նա։ — Ոսկե շրջանակի արժեքը գնահատման չի ենթարկվում։ Նրա ամենացածր արժեքը երկու անգամ ավելի է ինձ հարկավոր գումարից։ Պատրաստ եմ վարսակալը թողնել ձեզ մոտ։

Վերցրի թանկարժեք վարսակալով տուփն ու մի փոքր տատանվելով հայացքս հառեցի իմ անվանի այցելուի վրա։

— Կասկածում եք վարսակալի արժեքի վրա՞, — ժպտաց նա։

— Օ՜, ինչ եք ասում, կասկածում եմ միայն…

— …թե հարմա՞ր է արդյոք այս վարսակալը թողնել ձեզ մոտ։ Կարող եք չանհանգստանալ։ Այս միտքն իմ գլխում չէր ծագի, եթե լիովին հավատացած չլինեի, որ չորս օրից ետ կստանամ վարսակալը։ Դատարկ ձևականություն է։ Դե, իսկ երաշխիքը բավարար համարու՞մ եք։

— Միանգամայն։

— Դուք, իհարկե, հասկանում եք, միստր Հոլդեր, որ իմ քայլը ամենախորին վստահության վկայությունն է, որ տածում եմ ձեր նկատմամբ։ Այս վստահությունը հիմնված է ձեր մասին ունեցած տեղեկությունների վրա։ Հույսս դնում եմ ձեր համեստության վրա, և որ դուք կխուսափեք այդ մասին որևէ բան խոսելուց։ Խնդրում եմ նաև վարսակալը պահեք բացառիկ խնամքով, քանի որ ցանկացած վնասվածքը

աղմուկ կառաջացնի։ Դա համարյա նույնպիսի աղետալի հետևանքներ կունենա, ինչպես կորուստը։ Աշխարհում այլևս այսպիսի բյուրեղաքարեր չկան և եթե կորչի թեկուզ մեկը, ոչնչով փոխհատուցել չի լինի։ Բայց ես վստահում եմ ձեզ և հանգիստ խղճով ձեզ մոտ եմ թողնում վարսակալը։ Դրա ետևից կգամ անձամբ, երկուշաբթի առավոտ:

Տեսնելով, որ հաճախորդս շտապում է, ես առանց խոսակցությունը երկարացնելու հրավիրեցի գանձապահին և կարգադրեցի վճարել հիսուն հազար ֆունտ ստեռլինգ:

Մենակ մնալով և զննելով գրասեղանիս դրված թանկարժեք իրը, մտածեցի ինձ վրա դրված մեծ պատասխանատվության մասին։ Վարսակալի կորուստը մեծ աղմուկ կառաջացներ, չէ որ դա ազգային հարստություն էր։ Նույնիսկ սկսեցի ափսոսալ, որ խառնվեցի այդ գործին։ Բայց հիմա արդեն ոչնչով փոխել չէի կարող։ Վարսակալը կողպեցի իմ անձնական չհրկիզվող պահարանում և անցա աշխատանքի:

Երբ երեկոն իջավ, մտածեցի, որ թեթևամտություն կլինի դրամատանն այդպիսի հարստություն թողնելը։ Ու՞մ հայտնի չէ չհրկիզվող պահարանների կողոպուտը։ Իսկ եթե կողոպտեն և իմը։ Ինչ սարսափելի վիճակի մեջ կհայտնվեմ այդպիսի փորձանքի դեպքում։ Եվ որոշեցի վարսակալը պահել մոտս։ Հետո երկանիվ կառք կանչեցի և տուփը գրպանս դնելով մեկնեցի Սթրիթեմում գտնվող տունս։ Չկարողացա հանգստանալ մինչև սենյակս չբարձրացա և տուփը չկողպեցի ննջարանիս կից սենյակում գտնվող պահարանում:

Իսկ այժմ՝ տանն ապրող մարդկանց մասին։ Միստր Հոլմս, ես ցանկանում եմ, որպեսզի լրիվ ծանոթանաք իրավիճակին։ Ձիապանս և ծառայող տղան եկովի աշխատողներ են, այդ պատճառով կարելի է նրանց մասին չխոսել։ Ունեմ երկար տարիներ աշխատող երեք սպասուհի, և նրանց բացարձակ ազնվությունը փոքր իսկ կասկած չի հարուցում։ Չորրորդը՝ մատուցողուհի Լյուսի Պարը, ընդամենը մի քանի ամիս է ապրում մեզ մոտ։ Ընդունվել է հիանալի երաշխավորությամբ և լիովին գլուխ է հանում իր աշխատանքից։ Լյուսին լավ աղջիկ է, երկրպագուներ ունի, որոնք թափառում են տան շուրջը։ Դա միակ բանն է, որ ինձ դուր չի գալիս։ Ես նրան համարում եմ միանգամայն կարգին աղջիկ, բոլոր առումներով:

Ահա այն ամենը, ինչ վերաբերում է ծառաներին։ Ընտանիքս այնքան սակավաթիվ է, որ հարկ չկա այդ մասին շատ խոսել։ Կորցրել եմ կնոջս և ունեմ մի որդի։ Ի դժբախտություն ինձ, նա իմ հույսերը չարդարացրեց։ Կասկած անգամ չկա, որ ես եմ մեղավորը։ Ասում են, ես եմ շփացրել նրան։ Շատ հնարավոր է։ Երբ կինս մահացավ, հասկացա, որ այժմ տղաս իմ միակ մխիթարությունն է։ Չեմ կարող նրան ոչ մի բանում մերժել, բոլորովին չեմ կարող տանել փոքր իսկ դժգոհությունը։ Երևի երկուսիս համար էլ լավ կլիներ, եթե հետը մի փոքր խիստ լինեի։ Բայց այն ժամանակ այլ կերպ էի մտածում:

Բնականաբար, երազում էի, որ Արթուրը երբևէ կփոխարինի ինձ իմ գործում։ Միայն թե դրա համար նա ոչ մի հակում չուներ։ Դարձավ սանձարձագ, քմահաճ, և, ճիշտն ասած, չէի կարող նրան մեծ գումարներ վստահել։ Պատանի հասակում ընդունվեց ազնվականական ակումբ, իսկ հետո, շնորհիվ իր հրապուրիչ վարքագծի, դարձավ յուրային շատ հարուստ և վատնող մարդկանց շրջանում։ Նա հակվեց թմրամոլության, ունեցածը վատնեց ձիավարժարաններում և դրա հետևանքով հաճախ դիմում էր ինձ՝ գրպանի հետագա ծախսերի հաշվին դրամ ստանալու։ Դրամը հարկավոր էր թղթախաղերի պարտքերը վճարելու համար։ Ճիշտ է, Արթուրը բազմիցս ցանկացել է հեռանալ այդ շրջապատից, բայց ամեն անգամ իր ընկերոջ՝ սըր Ջորջ Բերնվելի ազդեցության տակ վերադարձել է նախկին ճանապարհին:

Ճիշտն ասած, ինձ շատ չի զարմացնում, որ սըր Ջորջ Բերնվելը ազդեցություն է թողնում տղայիս վրա։ Արթուրը նրան հաճախ է հրավիրել մեզ մոտ և պետք է ասել, որ անգամ ես եմ ընկել սըր Ջորջի հմայքի տակ։ Նա Արթուրից մեծ է, մինչև ուղն ու ծուծը ազնվակիրթ, հետաքրքիր զրուցակից, շատ ճանապարհորդած և իր ժամանակին շատ բան տեսած և, միաժամանակ, բացառիկ արտաքինով։ Բայց, համենայն դեպս, հանգիստ դատելով, մոռանալով նրա անձնական գրավչությունը և հիշելով նրա ցինիկ պատմություններն ու հայացքները, հասկացա, որ սըր Ջորջին վստահել չի կարելի:

Այդպես մտածում էի ոչ միայն ես, նույն տեսակետն էր պաշտպանում և Մերին, ունենալով նուրբ զգացողություն:

Այժմ մնում է պատմել միայն զարմուհուս՝ Մերիի մասին։ Հինգ տարի առաջ, երբ եղբայրս մահացավ, և նա աշխարհում մնաց մենակ, վերցրի ինձ մոտ։ Մինչև հիմա էլ հարազատ աղջկաս նման է։ Մերին արևի ցոլք է իմ տանը, այնպես քնքույշ, սիրալիր, փաղաքուշ, ինչպիսին կարող է լինել միայն կինը, միաժամանակ գերազանց տնտեսուհի է։ Մերին աջ ձեռքս է, և չեմ կարող պատկերացնել, թե ինչ կարող էի անել առանց նրա։ Միայն մի բանով է հակառակում կամքիս։ Որդիս՝ Արթուրը, սիրում է նրան, երկու անգամ խնդրել է ձեռքը և ամեն անգամ Մերին մերժել է։ Խորապես հավատացած եմ, որ եթե որևէ մեկը կարողանա ճիշտ ճանապարհի բերել որդուս, ապա դա նա է։ Ամուսնությունը Մերիի հետ կարող է փոխել Արթուրի ողջ կյանքը… Բայց այժմ, ավաղ, բավականին ուշ է։ Ամեն ինչ խորտակվեց:

Դե ահա, միստր Հոլմս, այժմ գիտեք տանիքիս տակ ապրող բոլոր մարդկանց, և ես, կշարունակեմ իմ տխուր պատմությունը:

Հենց այդ երեկո, երբ ճաշից հետո սուրճ էինք խմում հյուրասենյակում, Արթուրին և Մերիին պատմեցի, թե ինչ գանձ է գտնվում մեր տանը։ Իհարկե, չասացի հաճախորդի անունը։ Լյուսի Պարը, սուրճը մատուցելով, արդեն դուրս էր եկել սենյակից։ Դրանում հաստատ համոզված եմ, չնայած չեմ կարող պնդել, որ դուռը

ետևից փակված էր։ Մերին և Արթուրը, իմ պատմությամբ հետաքրքրված, ցանկացան տեսնել հոչակավոր վարսակալը, բայց ես, հանուն բարօրության, գերադասեցի ձեռք չտալ։

— Իսկ որտե՞ս ես դրել, — հարցրեց Արթուրը։

— Պահարանի մեջ։

— Պիտի հուսանք, որ այս գիշեր մեզ մոտ կողոպտիչներ չեն ներխուժի, — ասաց նա։

— Պահարանը փակված է բանալիով, — առարկեցի ես։

— Դատարկ բան է։ Ցանկացած բանալին կհարմարվի դրան։ Երեխա ժամանակս այն բացել եմ բուֆետի բանալիով։

Նա հաճախ էր ավելորդ բաներ դուրս տալիս, և ես ուշադրություն չդարձրի նրա բարբաջանքներին։ Սուրճից հետո Արթուրը մռայլ տեսքով ետևիցս մտավ իմ սենյակը։

— Լսիր, հայրիկ, — աչքերը խոնարհելով ասաց նա։ — Չե՞ս կարող երկու հարյուր ֆունտ պարտք տալ ինձ։

— Ոչ մի դեպքում, — կտրուկ պատասխանեցի ես։ — Առանց այդ էլ դրամական հարցում քեզ շատ եմ ազատություն տվել։

— Այո, դու միշտ էլ առատաձեռն ես եղել, — ասաց նա։ — Բայց հիմա ինձ խիստ անհրաժեշտ է այդ գումարը, այլապես չեմ կարող երևալ ակումբում։

— Ավելի լավ, — բացականչեցի ես։

— Բայց չէ որ ինձ կարող են անազնիվ մարդ համարել։ Ես չեմ տանի այդպիսիս ամոթանքը։ Այսպես թե այնպես, ես պետք է ձեռք բերեմ այդ գումարը։ Եթե դու երկու հարյուր ֆունտ չտաս, ստիպված կլինեմ այն ձեռք բերել մի այլ ճանապարհով։

Ես զայրացել էի. վերջին ամսում նման խնդրանքով երեք անգամ դիմել էր ինձ։

— Ոչ մի ֆարտինգ չես ստանա, — բացականչեցի ես։

Նա խոնարհվեց և անխոս դուրս եկավ սենյակից։

Արթուրի հեռանալուց հետո նայեցի պահարանի մեջ, համոզվեցի, որ թանկարժեք իրը տեղում է և նորից փակեցի բանալիով։

Հետո որոշեցի շրջել սենյակները և նայել, թե արդյո՞ք ամեն ինչ կարգին է։ Սովորաբար, այդ պարտականությունը իր վրա է վերցնում Մերին, բայց այսօր որոշեցի, որ ավելի լավ է ինքս անեմ։ Աստիճաններից իջնելիս տեսա հյուրասենյակի պատուհանը փակող զարմուհուս։

— Ասեք, հայրիկ, դուք թույլ տվե՞լ եք Լյուսիին հեռանալ։ — Ինձ թվաց, որ Մերին մի փոքր անհանգիստ է։

— Այդ մասին խոսք անգամ չի եղել։

— Հենց նոր նա դուրս եկավ ետնամուտքից։ Կարծում եմ, դուրս եկավ դռնակի մոտ ինչ-որ մեկին հանդիպելու։ Ինձ թվում է, դա բանի նման չէ, և ժամանակն է դրան վերջ տալու։

— Անպայման վաղը խոսիր հետը, կամ եթե ցանկանում ես, ինքս կանեմ։ Ստուգե՞լ ես, ամեն ինչ լավ փակվա՞ծ է։

— Այո, հայրիկ։

— Այդ դեպքում, բարի գիշեր, զավակս։ — Համբուրեցի նրան, գնացի ննջասենյակս և շուտով քնեցի։

Միստր Հոլմս, մանրամասն պատմում եմ այն ամենը, ինչը թեկուզ որոշ չափով կարող է կապ ունենալ գործի հետ։ Բայց եթե ինչ-որ բան ձեզ անհասկանալի թվա, հարցրեք, մի ամաչեք։

— Ոչ, ոչ, միանգամայն պարզ եք պատմում, — պատասխանեց Հոլմսը։

— Հիմա անցնում եմ պատմության այն մասին, որը կցանկանայի հատկապես ավելի մանրամասն շարադրել։ Սովորաբար խորը չեմ քնում, իսկ այդ անգամ անհանգստությունը խորը քնելուն բնավ չնպաստեց։ Մոտավորապես գիշերվա ժամը երկուսին արթնացա ինչ-որ թույլ աղմուկից։ Մինչ գլխի կընկնեի, թե ինչ է կատարվում, աղմուկը դադարեց, բայց այն տպավորությունը ստացա, որ զգուշորեն ինչ-որ տեղ փակեցին պատուհանը։ Համակ ուշադրություն դարձա։ Հանկարծ ննջարանիս կից սենյակից ինձ հասան քայլերի թեթև ձայներ։ Դուրս սողացի անկողնուց և սարսափից դողալով դռնից նայեցի։

— Արթու՛ր, — բղավեցի ես։ — Սրիկա՛։ Գո՛ղ։ Ինչպե՛ս կարողացար ձեռք տալ վարսակալին։

Գազը իջեցրած էր, և նրա թույլ լույսի տակ տեսա դժբախտ որդուս՝ հագին միայն վերնաշապիկ և տաբատ։ Կանգնած էր գազի լամպի տակ և բռնել էր վարսակալը։ Ինձ թվաց, թե նա աշխատում է ծռել կամ կոտրել այն։ Լսելով ձայնս,

Արթուրը ձեռքից գցեց վարսակալը և մեռելի պես գունատ դեմքով շրջվեց իմ կողմը։ Ես ճանկեցի գանձը. պակասում էր երեք բյուրեղաքարերով ոսկե ատամիկը։

— Սրիկա՛, — բացականչեցի զայրույթից ինձ կորցրած։ — Կոտրել այսպիսի իրը։ Դու պատվազրկեցիր ինձ, հասկանու՞մ ես։ Ու՞ր թաքցրիր գողացած քարերը։

— Գողացա՞ծ, — ընկրկեց նա։

— Այո, գողացած։ Դու գող ես, — ճչացի, թափահարելով ուսերը։

— Ոչ, չի կարող պատահել, ոչինչ չի կարող կորչել, — մրթմրթաց նա։

— Այստեղ երեք քար է պակասում։ Ու՞ր են դրանք։ Պարզվում է, որ դու ոչ միայն գող ես, այլև ստախոս։ Չէ որ տեսա, թե ինչպես էիր փորձում մի կտոր էլ պոկել։

— Բավական է։ Այլևս մտադիր չեմ հանդուրժել վիրավորանքները, — սառն ասաց Արթուրը։ — Ինձնից ոչ մի բառ չես լսի։ Առավոտյան հեռանում եմ տնից և ինքս պիտի կարգավորեմ իմ կյանքը։

— Դու իմ տնից կհեռանաս ոստիկանի ուղեկցությամբ, — վշտից ու զայրույթից խելագարված աղաղակեցի ես։ — Ցանկանում եմ ամեն ինչ իմանալ, բացարձակապես ամեն ինչ։

— Ոչ մի խոսք չեմ ասի, — հանկարծակի բռնկվեց նա։ — Եթե դու անհրաժեշտ ես համարում ոստիկանություն կանչել, խնդրեմ, թող փնտրեն։

Ես այնպես էի գոռում, որ ողջ տունը ոտքի հանեցի։ Մերին առաջինը սենյակ վազեց։ Տեսնելով վարսակալը և շփոթված Արթուրին, ամեն ինչ հասկացավ և, ճչալով գիտակցությունը կորցրեց։ Սպասուհուն ուղարկեցի ոստիկանի ետևից։ Երբ ժամանեցին ոստիկանն ու տեսուչը, ձեռքերը կրծքին խաչած, մռայլ կանգնած Արթուրը հարցրեց, միթե՞ իսկապես պատրաստվում են իրեն գողության մեջ մեղադրել։ Պատասխանեցի, որ այս գործը բոլորովին էլ մասնավոր գործ չէ, որ վարսակալը ազգային սեփականություն է, և որ ես հաստատ որոշել եմ գործին օրինական ընթացք տալ։

— Բայց դու գոնե թույլ չես տա, որ նրանք անհապաղ ինձ ձերբակալեն, — ասաց նա։ — Հանուն մեր ընդհանուր շահերի, թույլ տուր տնից բացակայել գոնե հինգ րոպե։

— Որպեսզի թաքնվես կամ ավելի լա՞վ պահես գողացվածը, — բացականչեցի ես։

Ես հասկանում էի իմ վիճակի ողջ ահավորությունը և թախանձում էի նրան մտածել, որ խաղաքարտի վրա է դրված ոչ միայն իմ, այլև ավելի բարձրաստիճան մի անձի անունը, որ վարսակալի կորուստը մեծ իրարանցում կառաջացնի, կցնցի ողջ ազգը:

Այդ ամենից կարելի է խուսափել, եթե միայն նա ասի, թե ինչ է արել այդ երեք քարերը:

— Հասկացիր, — ասացի ես։ — Դու բռնվել ես հանցանքի վայրում։ Խոստովանությունը չի սաստկացնի հանցանքդ։ Ընդհակառակը, եթե վերադարձնես բյուրեղաքարերը, ապա կօգնես ուղղելու ստեղծված վիճակը, և քեզ կներեն:

— Ձեր ներողամտությունը պահեք նրանց համար, ովքեր դրա կարիքն ունեն, — ասաց նա մեծամտորեն և շրջվեց:

Տեսա, որ նա ծայրաստիճան գրգռված է, և հետագա հորդորներն անօգուտ են։ Մնացել էր մի ելք։ Հրավիրեցի տեսուչին, և նա հսկողության տակ վերցրեց Արթուրին:

Ոստիկաններն անմիջապես խուզարկեցին Արթուրին ու նրա սենյակը, տակնուվրա արին ամեն ծակ ու ծուկ, բայց թանկարժեք քարերը չհայտնաբերվեցին, իսկ անողոք տղան բերանն անգամ չբացեց, չնայած մեր հորդորներին ու սպառնալիքներին։ Այսօր առավոտյան նրան բանտ ուղարկեցին։ Իսկ ես վերջացնելով ձևականությունները, շտապեցի ձեզ մոտ։ Աղաչում եմ, գործի դրեք ձեր ողջ արվեստը՝ բացահայտելու այդ գործը։ Ոստիկանատանը բացեիբաց ասացին, դժվար թե ինչ-որ բանով կարողանան ինձ օգնել։ Ոչ մի ծախսից չեմ խուսափի։ Արդեն հազար ֆունտ պարգևատրություն եմ առաջարկել… Տեր Աստված։ Ի՞նչ անել։ Մի գիշերվա մեջ կորցրի պատիվս, կարողությունս և որդուս… Օ, ի՞նչ անեմ:

Նա բռնեց գլուխն ու մրթմրթած՝ իր ցավը արտահայտել չկարողացող երեխայի նման:

Խոժոռելով հոնքերն ու հայացքը սևեռելով բուխարու կրակին, Հոլմսը մի քանի րոպե լուռ նստեց:

— Հաճա՞խ եք հյուրեր ունենում, — հարցրի ես:

— Ոչ, մեզ ոչ ոք չի այցելում. երբեմն միայն գալիս է գործնկերս՝ կնոջ հետ, և հազվադեպ՝ Արթուրի ընկերներից որևէ մեկը։ Վերջերս մի քանի անգամ մեզ այցելեց Ջորջ Բերնվելը։ Ուրիշ ոչ ոք:

— Իսկ դուք հաճա՞խ եք լինում հասարակության մեջ:

— Արթուրը՝ հաճախ։ Իսկ ես ու Մերին միշտ տանն ենք։ Երկուսս էլ տնակյաց ենք։

— Դա անսովոր է երիտասարդ օրիորդի համար։

— Նա շատ մարդամոտ չէ և, բացի այդ, այնքան էլ երիտասարդ չէ։ Արդեն քսանչորս տարեկան է։

— Ասում եք, որ պատահարը հարվա՞ծ էր նրա համար։

— Օ, այո։ Ինձնից շատ է ցնցված։

— Արթուրի մեղավորության հարցում ձեզ մոտ կասկած չառաջացա՞վ։

— Ի՞նչ կասկածներ կարող են լինել, երբ սեփական աչքով տեսա վարսակալն Արթուրի ձեռքում։

— Չեմ կարող դա հանցանքի վճռական ապացույց համարել։

— Ասացեք, բացի կոտրված ատամիկից, վարսակալի վրա ուրիշ էլի ինչ-որ վնասվածք կա՞ր։

— Այն ծռված էր։

— Իսկ ձեր մտքով չանցա՞վ, որ ձեր տղան ուղղակի ուզում էր ուղղել այն։

— Ի՞նչ եք ասում։ Հասկանում եմ, ցանկանում եք նրան արդարացնել իմ աչքում։ Բայց դա անհնար է։ Ի՞նչ էր անում նա իմ սենյակում։ Եթե հանցագործ մտադրություններ չուներ, ինչու՞ է լռում։

— Այդ ամենը ճիշտ է։ Բայց մյուս կողմից, եթե նա մեղավոր է, ապա ինչու չի փորձում իրեն արդարացնող որևիցե վարկած մտածել։ Այն հանգամանքը, որ նա չի ցանկանում խոսել, ըստ իս, բացառում է երկու ենթադրություն։ Եվ ընդհանրապես, այստեղ մի քանի անհասկանալի մանրամասներ կան։ Ի՞նչ է մտածում ոստիկանությունը այն աղմուկի մասին, որն արթնացրեց ձեզ։

— Կարծում են, որ Արթուրը ննջարանից դուրս գալիս անզգուշաբար շրխկացրել է դուռը։

— Շատ նման է։ Հանցագործության գնալիս մարդը շրխկացնում է դուռը, որպեսզի արթնացնի ողջ տունը։ Իսկ ի՞նչ են մտածում անհետացած քարերի մասին։

— Հիմա էլ դեռ թխկթխկացնում են պատերն ու զննում կահույքը։

— Իսկ չե՞ն փորձել փնտրել տնից դուրս:

— Նրանք բացառիկ եռանդ ցույց տվին։ Սանրեցին ողջ այգին:

— Դե, թանկագին միստր Հոլդեր, — ասաց Հոլմսը, — մի՞թե ակնհայտ չէ, որ ամեն ինչ ավելի բարդ է, քան ենթադրում եք դուք և ոստիկանությունը։ Դուք գործը հասարակ եք համարում, իսկ իմ կարծիքով սա շատ խճճված պատմություն է։ Ինքներդ դատեք, ըստ ձեզ գործի ընթացքն այսպիսին է. Արթուրը ելնում է անկողնուց, մեծ համարձակությամբ թափանցում է այդ սենյակը, բացում է պահարանը և հանում վարսակալը, մեծ դժվարությամբ կոտրում է ատամիկը, դուրս է գալիս և ինչ-որ տեղ պահում երեսունինը բյուրեղաքարերից երեքը, ընդ որում, այնպիսի ճարպկությամբ, որ ոչ մեկը չի կարողանում գտնել։ Մի՞թե այսպիսի վարկածը իսկապես ձեզ ճշմարտանման է թվում:

— Այդ դեպքում խելքս չի կտրում, թե ինչ կարող է պատահած լինել, — բացականչեց դրամատան հուսահատ տնօրենը։ — Եթե վատ մտադրություն չուներ, ինչու՞ է լռում:

— Հանելուկ լուծելն արդեն մեր գործն է, — պատասխանեց Հոլմսը։ — Իսկ այժմ, միստր Հոլդեր, մենք միասին կուղեվորվենք Սթրիթեմ և մի քանի ժամ կծախսենք, որպեսզի տեղում ծանոթանանք որոշ հանգամանքների:

Ընկերս ստիպեց, որպեսզի ուղեկցեմ իրեն։ Ես հաճույքով համաձայնեցի, այդ տարօրինակ պատմությունը ծայրահեղ հետաքրքրություն և խոր համակրանք առաջացրեց դժբախտ Հոլդերի հանդեպ։ Անկեղծ ասած, Արթուրի մեղավորությունը ինչպես մեր այցելուին, այնպես էլ ինձ միանգամայն անվիճելի թվաց և, այնուամենայնիվ, հավատում էի նաև Հոլմսի զգացողությանը. եթե ընկերս չէր բավարարվել Հոլդերի բացատրությունից, ուրեմն ինչ-որ հույս կար:

Մինչև Լոնդոնի հարավային մասը հասնելը Հոլմսը ոչ մի խոսք չարտասանեց։ Խոր մտածմունքի մեջ ընկնելով, նստել էր գլուխը խոնարհած կրծքին և լայնեզր գլխարկը քաշել էր մինչև աչքերը։ Մեր այցելուն, ընդհակառակը, թվում էր, ոգեշնչվել էր հույսի փոքր ճառագումից և փորձեց հետս խոսել դրամատան գործերից։ Ճանապարհը երկար չէր. կարճատև ճանապարհորդություն երկաթգծով, ոտքով կարճ զբոսանք և ահա արդեն Ֆերբենկում ենք, խոշոր դրամատիրոջ համեստ նստավայրում:

Ֆերբենկը սպիտակ քարից մեծ քառակուսի տուն էր, խճուղուց ոչ հեռու, նրան միացած միայն կառքի ճանապարհով։ Հիմա ծանր երկաթյա դարպասներով փակվող այդ ճանապարհը ծածկված էր ձյունով։ Դրանից աջ խիտ մացառուտների թփեր էին, ետևում՝ նեղ արահետ, երկու կողմից՝ կանաչ ցանկապատ, արահետը տանում էր խահանոց, դրանից մեծ մասամբ օգտվում էին մթերք մատակարարողները։ Ձախ

կողմում ճանապարհ կար դեպի ձիանոց։ Ճիշտն ասած, դա չէր մտնում Ֆերբենկի կալվածքի մեջ և հասարակության սեփականությունն էր։ Ասենք, այնտեղ օտարների հազվադեպ կարելի էր հանդիպել։

Հոլմսը մեզ հետ տուն չմտավ. դանդաղ շարժվեց շենքի ճակատի երկայնքով,խոհանոց տանող ճանապարհով, հետո այգու միջով գնաց դեպի ձիանոց։ Միստր Հոլդերն ու ես այդպես էլ չսպասեցինք Հոլմսին, տուն մտնելով լուռ տեղավորվեցինք ճաշասենյակում՝ բուխարու մոտ։ Հանկարծ դուռը թափով բացվեց, և լուռ ներս մտավ երիտասարդ մի աղջիկ։ Միջահասակից մի փոքր բարձր էր, վայելչակազմ, մուգ մազերով ու աչքերով։ Այդ աչքերն ավելի մուգ էին թվում դեմքի գունատությունից։ Երբեք առիթ չեմ ունեցել տեսնելու այդպիսի մեռելային գունատուցյուն։ Շրթունքները բոլորովին ճերմակ էին, աչքերը՝ թաց։ Թվում էր, նա ավելի էր ցնցված դժբախտությունից, քան նույնիսկ միստր Հոլդերը։ Միաժամանակ դիմագծերն ասում էին ուժեղ կամքի և մեծ իքնատիրապետման մասին։

Ուշադրություն չդարձնելով ինձ վրա, նա մոտեցավ հորեղբորն ու նրբորեն շոյեց մազերը։

— Դուք կարգադրե՞լ եք, որպեսզի Արթուրին ազատեն, հայրիկ, — հարցրեց նա։

— Ոչ, աղջիկս, գործը պետք է հետաքննել մինչև վերջ։

— Ես խորապես հավատացած եմ, որ նա մեղավոր չէ։ Սիրտս է վկայում։ Նա չէր կարող որևէ վատ բան անել։ Հետո ինքներդ կափսոսաք, որ հետն այդպես խիստ եք վարվել։

— Բայց ինչու՞ է նա լռում, եթե մեղավոր չէ։

— Հնարավոր է, վիրավորվել է, որ դուք իրեն կասկածում եք գողության մեջ։

— Ինչպե՞ս չկասկածել, եթե ես եմ ձեռքին բռնել վարսակալը։

— Նա վարսակալը վերցրել է, որ նայի։ Հավատացեք, հայրիկ, նա մեղավոր չէ։ Խնդրում եմ, դադարեցրեք այդ գործը։ Ինչ սարսափելի է, որ մեր թանկագին Արթուրը բանտում է։

— Ես չեմ դադարեցնի գործը, մինչև բյուրեղաքարերը չգտնեն։ Դու այնքան ես կապված Արթուրին, որ մոռանում ես սարսափելի հետևանքների մասին։ Ոչ, Մերի, ես չեմ նահանջի, ընդհակառակը, ամենամանրակրկիտ հետաքննության համար Լոնդոնից մի ջենտլմենի եմ հրավիրել։

— Այդ դու՞ք եք, — Մերին շրջվեց իմ կողմը։

— Ոչ, նրա ընկերն է։ Այն ջենտլմենը խնդրեց իրեն մենակ թողնել։ Նա ցանկացավ անցնել ձիանոց տանող ճանապարհով։

— Ձիանո՞ց, — հոնքերը զարմանքից ձգվեցին։ — Ի՞նչ է ուզում այնտեղ գտնել։ Ահա, հավանաբար, և նա։ Սըր, հուսով եմ, որ ձեզ կհաջողվի ապացուցել իմ ազգականի անմեղսակցությունը այդ գործում։ Ես համոզված եմ դրանում։

— Լիովին համամիտ եմ ձեզ, — ասաց Հոլմսը, թափ տալով կոշիկների ձյունը։ — Կարծում եմ պատիվ ունեմ խոսելու միսս Հոլդերի հե՞տ։ Թույլ կտա՞ք մի քանի հարց տալ ձեզ։

— Աստծու սիրուն, սըր։ Եթե միայն պատասխաններս օգնեն լուծելու այս սարսափելի գործը։

— Այս գիշեր ոչինչ չլսեցի՞ք։

— Ոչինչ, քանի ինձ չհասավ հորեղբորս ձայնը, և ես այդ ժամանակ ներքև իջա։

— Նախորդ երեկո դուք փակեցիք դուռն ու պատուհանը։ Լա՞վ էիք փակել։

— Այո։

— Եվ այս առավոտ էլ փա՞կ էին։

— Այո։

— Ձեր սպասուհին երկրպագու ունի։ Երեկ երեկոյան դուք ձեր հորեղբորն ասե՞լ եք, որ նա գնացել է նրա մոտ։

— Այո։ երեկ նա մեզ սուրճ մատուցեց։ Կարող էր լսել, թե ինչպես էր հորեղբայրս պատմում վարսակալի մասին։

— Հասկանում եմ։ Այստեղից էլ եզրակացնում եք, որ նա կարող էր ինչ-որ բան հայտնել իր երկրպագուին և միասին ծրագրել գողությունը։

— Ինչ օգուտ այս բոլոր մշուշապատ ենթադրություններից, — անհամբերությամբ բացականչեց միստր Հոլդերը։ — Չէ որ ասացի, որ Արթուրին տեսա վարսակալը ձեռքին։

— Պետք չէ շտապել, միստր Հոլդեր։ Դրան դեռ կանրադառնանք։ Իսկ հիմա ձեր սպասուհու մասին։ Միսս Հոլդեր, նա տուն մտավ խոհանոցի՞ մուտքից։

— Այո։ Իջա ներքև նայելու, արդյո՞ք փակ է դուռը և շեմին տեսա Լյուսիին։ Խավարում նկատեցի նաև նրա երկրպագուին:

— Դուք ճանաչու՞մ եք նրան:

— Այո, բանջարեղեն վաճառող է, մեզ կանաչի է բերում։ Նրա անունը Ֆրենսիս Պրոսպեր է:

— Եվ նա կանգնել էր դռնից մի փոքր հեռու՞:

— Այո:

— Եվ փայտե ո՞տք ունի:

Կարծես ինչ-որ վախ նշմարվեց աղջկա արտահայտիչ սև աչքերում:

— Դուք կախարդ եք, — ասաց նա։ — Այդ ինչպե՞ս իմացաք։ — Ժպտաց, բայց Հոլմսի նիհար, ազդեցիկ դեմքին պատասխան ժպիտ չհայտնվեց:

— Կցանկանայի վերև բարձրանալ, — ասաց նա։ — Ասենք, նախ պատուհանները կզննեմ:

Նա արագ շրջեց առաջին հարկում՝ մի պատուհանից մյուսին անցնելով, հետո կանգնեց մեծ պատուհանի մոտ, որը բացվում էր ձիանոց տանող ճանապարհի կողմը։ Բացեց պատուհանը և խոշորացույցով մանրակրկիտ զննեց լուսամուտագոգը:

— Դե ինչ, հիմա գնանք վերև, — ասաց նա վերջապես:

Դրամատան տիրոջ ննջարանին կից սենյակը շատ համեստ էր. մոխրագույն գորգ, մեծ պահարան, և բարձր հայելի։ Հոլմսն առաջին հերթին մոտեցավ պահարանին և մանրազնին նայեց փականքի անցքին:

— Ի՞նչ բանալիով են բացել, — հարցրեց նա:

— Հենց այն նույն խորդանոցի սպասքապահարանի բանալիով, որ ասաց որդիս:

— Որտե՞ղ է բանալին:

— Ահա, զարդասեղանին է:

Հոլմսը վերցրեց բանալին և բացեց պահարանը:

— Փականքն անաղմուկ է, — ասաց նա։ — Զարմանալի չէ, որ չեք արթնացել։ Կարծում եմ, այս տուփի մե՞ջ էր վարսակալը։ Տեսնենք… Նա բացեց տուփը, հանեց

վարսակալը և դրեց սեղանին։ Ոսկերչական արվեստի հրաշալի ստեղծագործություն էր։ Ինձ երբեք չի հաջողվել տեսնել այդ երեսունվեց բյուրեղաքարերի նման ապշեցուցիչ բան։ Վարսակալի մեկ ատամիկը կոտրած էր:

— Ահա այս ատամիկը նման է կոտրվածին, — ասաց Հոլմսը։ — Միստր Հոլդեր, բարի եղեք, փորձեք կոտրել:

— Աստված ինձ պահապան, — բացականչեց դրամատան տերը և սարսափահար հեռացավ Հոլմսից:

— Դե, այդ դեպքում ինքս կփորձեմ։ — Հոլմսը հավաքեց բոլոր ուժերը, բայց փորձն անհաջող ստացվեց։ — Մի փոքր տեղի է տալիս, բայց հավանաբար հարկ կլիներ երկար զբաղվել, որպեսզի կոտրեի ատամը, չնայած ես շատ ուժեղ եմ։ Ֆիզիկապես նորմալ զարգացած մարդու ուժերից վեր է դա։ Բայց, ենթադրենք, այնուամենայնիվ կոտրեցի վարսակալը։ Ատրճանակի կրակոցի պես տրաքոց կլսվի։ Միստր Հոլդեր, մի՞թե ենթադրում եք, որ դա կատարվել է համարյա ձեր ականջի մոտ և ոչինչ չեք լսել:

— Արդեն չգիտեմ ինչ մտածեմ։ Այս բոլորն ինձ համար անհասկանալի է:

— Ինչ իմանաս, գուցե ամեն ինչ կպարզվի։ Իսկ դու՞ք ինչ եք կարծում, միսս Հոլդեր:

— Խոստովանում եմ, կիսում եմ հորեղբորս տարակուսանքը:

— Ասացեք, միստր Հոլդեր, այդ բոպեին ձեր տղայի ոտքերին կոշիկներ կամ կիսակոշիկներ կայի՞ն:

— Ոչ, ոտաբոբիկ էր, հագին միայն տաբատ ու վերնաշապիկ կար:

— Շնորհակալ եմ ձեզնից։ Դե ինչ, մեր բախտը բերում է, և եթե մենք չբացահայտենք գաղտնիքը, ապա դա միայն մեր մեղքով կլինի։ Ձեր թույլտվությամբ, միստր Հոլդեր, մեկ անգամ էլ կշրջեմ տան շուրջը:

Հոլմսը մենակ դուրս եկավ. ավելորդ հետքերը նրա ասելով, միայն խանգարում են գործին։ Նա անհետացավ մեկ ժամի չափ, իսկ երբ վերադարձավ, ոտքերն ամբողջովին ձյունոտ էին, դեմքն, ինչպես միշտ, անթափանց:

— Ինձ թվում է, նայեցի այն ամենն, ինչ հնարավոր է, — ասաց նա, — և կարող եմ տուն վերադառնալ :

— Իսկ քարե՞րը, միստր Հոլմս, որտե՞ղ են դրանք, — բացականչեց դրամատան տերը:

— Այդ ասել չեմ կարող:

Դրամատան տերը հուսահատորեն կոտրատեց ձեռքերը:

— Մի՞թե անվերադարձ կորան, — տնքաց նա: — Իսկ Արթու՞րը: Գեթ մի փոքր հույս տվեք:

— Կարծիքս ձեր տղայի մասին չփոխվեց:

— Հանուն բոլոր սրբերի, ի՞նչ է կատարվել իմ տանը:

— Եթե վաղն առավոտյան ժամը իննից մինչև տասը այցելեք ինձ Բեյքր-սթրիթ, կարծում եմ, կկարողանամ ավելի մանրամասն բացատրություն տալ: Հուսով եմ, հնարավորություն կտաք ինձ ազատ գործելու, պայմանով իհարկե, որ քարերը պիտի վերադարձվեն, և կանգ չեք առնի ծախսերի առաջ:

— Կտայի ողջ կարողությունս:

— Հիանալի է: Ես կմտածեմ այս պատմության շուրջը: Ցտեսություն: Գուցե այսօր դարձյալ գամ այստեղ:

Պարզ էր, որ Հոլմսն արդեն ինչ-որ բան մտածել էր, բայց ես, անգամ մոտավորապես չէի կարող պատկերացնել, թե ինչ եզրակացության է հանգել նա: Ճանապարհին մի քանի անգամ փորձեցի այդ թեմայով զրուցել, բայց Հոլմսն ամեն անգամ խուսափում էր պատասխանից: Վերջապես, հուսահատվելով, ընդհատեցի փորձերս: Դեռ ժամը երեքը չկար, երբ տուն վերադարձանք: Հոլմսն աճապարանքով գնաց իր սենյակն ու մի քանի րոպեից նորից հայտնվեց: Հասցրել էր փոխել հագուստը: Բարձրացրած օձիքով քրքրված վերարկուն, անփույթ կապված վզնոցն ու մաշված կոշիկները նրան տալիս էին տիպիկ թափառաշրջիկի տեսք:

— Դե, կարծում եմ, այսպես հարմար է, — ասաց նա, նայելով բուխարու վրայի հայելու մեջ: — Կցանկանայի ձեզ հետս վերցնել, Ուոտսոն, բայց դա անկարելի է: Ճիշտ ուղու վրա եմ, թե չէ, շուտով կիմանաք: Կարծում եմ, մի քանի ժամից կվերադառնամ: — Նա բացեց սպասքապահարանը, երկու կտոր միս կտրեց, դրեց հացի մեջ, թղթով փաթաթեց, դրեց գրպանն ու գնաց:

Հենց նոր էի ավարտել թեյը, երբ Հոլմսը վերադարձավ հիանալի տրամադրությամբ՝ թափահարելով ինչ-որ հին կոշիկ: Նա կոշիկը շպրտեց սենյակի անկյունն ու իր համար թեյ լցրեց:

— Մեկ րոպեով մտա, պիտի շարունակեմ ճամփաս:

— Իսկ ու՞ր:

— Վեստ-Էնդի հակառակ ծայրը։ Գուցե ուշ վերադառնամ։ Եթե ուշանամ, ինձ չսպասեք։

— Հաջողություն կա՞։

— Ոչինչ, չեմ բողոքում։ Եղա Սթրիթեմում, բայց տուն չմտա։ Հետաքրքիր գործ է, չէի ցանկանա ձեռքից բաց թողնել։ Սակայն բավական է շատախոսել, պետք է նետել այս լաթերն ու նորից դառնալ վայելուչ մարդ։

Ընկերոջս վարքից տեսնում էի, որ գոհ է արդյունքից։ Աչքերը բոցկլտում էին, գունատ այտերին նույնիսկ կարմրություն էր հայտնվել։ Նա բարձրացավ իր սենյակն ու մի քանի րոպեից լսեցի, թե ինչպես շրխկացրեց շքամուտքի դուռը։ Հոլմսը դարձյալ մեկնեց «որսի»։

Սպասեցի մինչև կեսգիշեր, բայց տեսնելով, որ նա չկա ու չկա, գնացի քնելու։ Երբ ընկնում էր հետքի վրա, Հոլմսը սովորություն ուներ երկար ժամանակ չքանալու, այնպես որ նրա ուշացումն ինձ բոլորովին չզարմացրեց։ Չգիտեմ ժամը քանիսին վերադարձավ, բայց երբ հաջորդ առավոտյան գնացի նախաճաշելու, Հոլմսն արդեն նստել էր սեղանի մոտ՝ մի ձեռքին սուրճի բաժակ, մյուսին թերթ։ Ինչպես միշտ, առույգ ու ձգված էր։

— Կներեք, Ուոտսոն, որ նախաճաշն սկսել եմ առանց ձեզ, — ասաց նա։ — Բայց ուր որ է մեր այցելուն կհայտնվի։

— Այո, արդեն ժամը տասն է, — պատասխանեցի ես։ — Կարծես զանգում են։ Հավանաբար, նա է։

Եվ իսկապես, միստր Հոլդերն էր։ Ինձ ապշեցրեց նրա մեջ կատարված փոփոխությունը։ Նրա խոշոր, ազդեցիկ դեմքը սմքել էր և ինչ-որ ձևով կնճռոտվել, թվում էր, մազերն ավելի էին ճերմակել։ Նա մտավ հոգնած քայլերով, թորշոմած, տանջահար, որն ավելի ճնշող էր, քան նախորդ առավոտվա բուռն հուսահատությունը։ Ծանրորեն ընկնելով բազկաթոռին, խոսեց։

— Չգիտեմ, սա ինչ պատիժ էր։ Երկու օր առաջ երջանիկ, հաջողակ մարդ էի, իսկ հիմա անպատված և միայնակության մատնված։ Դժբախտությունը մենակ չի գալիս։ Անհետացել է Մերին։

— Անհետացե՞լ է։

— Այո։ Սենյակը դատարկ է, անկողնուն ձեռք տրված չէ, իսկ սեղանին՝ այս գրությունը։ Երեկ նրան ասացի, որ եթե ամուսնանար Արթուրի հետ, նրան ոչինչ չէր պատահի։ Խոսեցի առանց զայրույթի, պարզապես վշտից սպանվածի պես։ Հավանաբար, այդպես չպետք է խոսեի։ Երկտողի մեջ ակնարկում է, այդ խոսքերը։

«Թանկագին հորեղբայր.

Գիտեմ,որ ձեզ մեծ վիշտ եմ պատճառել և եթե այլ կերպ վարվեի, այս սարսափելի դժբախտությունը տեղի չէր ունենա։ Այս մտքից չեմ կարող երջանիկ լինել ձեր հարկի տակ և ձեզ լքում եմ ընդմիշտ։ Մի անհանգստացեք ապագայիս համար և որ գլխավորն է, մի փնտրեք ինձ, որովհետև դա աննպատակ է և կարող է ինձ վնասել։ Հավերժ ձեզ սիրող

Մերի»։

— Ի՞նչ է նշանակում այս երկտողը, միստր Հոլմս։ Մի՞թե ցանկանում է ինքնասպան լինել։

— Օ՜, ոչ, ոչ մի նման բան։ Գուցե սա ամենալավ ձևով լուծում է ամբողջ խնդիրը։ Հավատացած եմ, միստր Հոլդեր, որ ձեր փորձությունները մոտենում են ավարտին։

— Այդպե՞ս եք կարծում։ Ինչ-որ նոր բա՞ն եք իմացել։ Իմացե՞լ եք, որտե՞ղ են բյուրեղաքարերը։

— Ամեն քարի համար հազար ֆունտը չափազանց մեծ վճար չե՞ք համարի։

— Կվճարեի տասը։

— Դրա անհրաժեշտությունը չկա։ Երեք հազարը լիովին բավարար է, չհաշված իմ պարգևատրությունը։ Դրամագրքույկը ձեզ մո՞տ է։ Ահա գրիչը։ Դուրս գրեք չորս հազար ֆունտի ստացական։

Դրամատան տերն ապշահար ստորագրեց ստացականը։ Հոլմսը մոտեցավ գրասեղանին, հանեց երեք բյուրեղաքարերով փոքրիկ եռանկյունի ոսկին և դրեց սեղանին։ Միստր Հոլդերն ուրախ ճիչով հափշտակեց իր գանձը։

— Ես փրկված եմ, փրկված, — կրկնեց նա շնչահեղձ լինելով։ — Դուք գտա՛ք դրանք։

Նրա ուրախությունը նույնքան բուռն էր, ինչպես և երեկվա հուսահատությունը։ Ուժգին կրծքին սեղմեց գտնված գանձը։

— Դուք մի պարտք էլ ունեք, միստր Հոլդեր, — խիստ ասաց Հոլմսը։

— Պա՞րտք։ — Դրամատան տերը հափշտակեց գրիչը։ — Հայտնեք գումարը և այն անմիջապես կգրեմ ձեզ։

— Ոչ, ինձ չէ։ Դուք պետք է ներողություն խնդրեք ձեր որդուց։ Նա իրեն արիաբար և վեհանձն պահեց։ Այդպիսի որդի ունենայի, կհպարտանայի նրանով։

— Ուրեմն Արթու՞րը չի վերցրել քարերը։

— Ոչ, նա չէ։ Դա ասել եմ երեկ և կրկնում եմ այսօր։

— Այդ դեպքում շտապենք նրա մոտ ու հայտնենք, որ ճշմարտությունը հաղթանակել է։

— Նա ամեն ինչ գիտե։ Ես զրուցել եմ նրա հետ, երբ քանդում էի հանգույցը։ Հասկանալով, որ չի ցանկանում խոսել, ինքս շարադրեցի այդ ամբողջ պատմությունը, և նա խոստովանեց, որ ես ճիշտ եմ, և իր հերթին մի քանի մանրամասներ պատմեց, որոնք ինձ պարզ չէին։ Հենց նոր ձեզ հայտնած նորությունը, հնարավոր է, կստիպի նրան լիովին անկեղծ լինել։

— Դե, աստծո սիրուն, բացեք այդ անհավատալի գաղտնիքը։

— Հիմա ձեզ կպատմեմ, թե ինչ ճանապարհով ինձ հաջողվեց հասնել ճշմարտության։ Բայց սկզբում թույլ տվեք ձեզ հայտնել մի ծանր լուր. ձեր ազգականուհին՝ Մերին, հանցավոր դավադրության մեջ է եղել սըր Ջորջ Բերնվելի հետ։ Հիմա նրանք երկուսով թաքնվել են։

— Մերի՞ն։ Դա անհնար է։

— Դժբախտաբար, դա փաստ է։ Ձեր տանն ընդունելով սըր Ջորջ Բերնվելին. ոչ դուք, ոչ ձեր որդին, ինչպես հարկն է չեք ճանաչել նրան։ Իսկ նա, ի միջի այլոց, վտանգավոր անձնավորություն է՝ խաղամոլ, հայտնի սրիկա, մարդ՝ առանց սրտի ու խղճի։ Ձեր ազգականուհին գաղափար անգամ չունի, որ այդպիսի մարդիկ կան։ Լսելով նրա խոստովանանքն ու երդումները, Մերին կարծում էր, որ նվաճել է նրա սերը։ Իսկ Ջորջը մինչ այդ շատերին է ասել նույն բաները։ Միայն սատանային է հայտնի, թե ինչպես է կարողացել Մերիին կամազուրկ անել, բայց այսպես թե այնպես, Մերին նրա ձեռքին հնազանդ գործիք է դարձել։ Նրանք հանդիպել են համարյա ամեն գիշեր։

— Չեմ հավատում, չեմ կարող դրան հավատալ, — բղավեց դրամատան տերը։ Նրա դեմքը դարձել էր բաց մոխրագույն։

— Իսկ հիմա կպատմեմ, թե երեկ գիշեր ինչ է կատարվել ձեր տանը։ Երբ ձեր ազգականուհին համոզվեց, որ դուք գնացիք ձեր սենյակը, իջավ ներքև, բացեց ճանապարհին նայող պատուհանը, որն ախոռ է տանում, և իր սիրեկանին հայտնեց վարսակալի մասին։ Սըր Ջորջի հետքերը հստակ գծագրվում էին պատուհանի տակի ձյան վրա։ Հարստացման տենչը համակեց սըր Ջորջին, նա բառացիորեն իր կամքին

ենթարկեց Մերիին։ Չեմ կասկածում, որ Մերին շատ է սիրում ձեզ, բայց կան որոշ կանայք, որոնց մոտ տղամարդու սերը հաղթում է մնացած բոլոր զգացմունքներին։ Մերին դրանց թվում է։ Նրա հետ հազիվ էր պայմանավորվել թանկարժեք իրը հափշտակելու մասին, երբ լսեց, որ իջնում եք աստիճաններից։ Այն ժամանակ արագ փակելով պատուհանը, ձեզ ասաց, որ սպասուհու մոտ է եկել բանջարեղեն վաճառողը։ Եվ նա իսկապես եկել էր…

Այդ գիշեր Արթուրը չկարողացավ քնել, նրան խռովել էին ակումբային պարտքերը։ Հանկարծ իր սենյակի կողքին զգույշ քայլերի խշշոց լսեց։ Վեր կացավ, դռան ետևից նայեց և զարմանքով տեսավ իր հորեղբոր աղջկան, որ գաղտագողի անցնում էր միջանցքով և անհետացավ ձեր սենյակում։ Շշմած Արթուրն արագ հագնվեց և սպասեց, թե ինչ պետք է կատարվի։ Շուտով Մերին դուրս եկավ. միջանցքի լույսի ներքո ձեր որդին նրա ձեռքին նկատեց թանկարժեք վարսակալը։ Մերին աստիճաններով իջավ ներքև։ Սարսափից դողալով Արթուրը սողաց ձեր դռան ծանր վարագույրի ետևը. այդտեղից երևում էր այն ամենը, ինչ կատարվում էր հյուրասենյակում:

Մերին զգուշորեն բացեց պատուհանը, մթան մեջ ինչ-որ մեկին տվեց վարսակալը, իսկ հետո փակելով պատուհանը, շտապեց իր սենյակը՝ անցնելով ծանր վարագույրի ետևում քար կտրած Արթուրի կողքից:

Վախենալով դիմազրկել սիրած աղջկան, Արթուրը ոչինչ չէր կարող ձեռնարկել, չնայած գիտեր, թե ինչ հարված կլիներ ձեզ համար վարսակալի կորուստը և որքան կարևոր է վերադարձնել թանկարժեք իրը։ Բայց հազիվ էր Մերին իր ետևից ծածկել իր սենյակի դուռը, Արթուրը կիսահագնված ու բոբիկ ներքև նետվեց, թափով բացեց պատուհանը, թռավ այգի և սուրաց ճանապարհով. այնտեղ հեռվում, լուսնի լույսի ներքո, երևաց ինչ-որ մեկի մթին ստվերը:

Սըր Ջորջ Բերնվելը փորձեց փախչել, բայց Արթուրը հասավ։ Նրանց միջև պայքար սկսվեց։ Մի կողմից ձեր որդին էր քաշում վարսակալի ծայրը, մյուս կողմից՝ հակառակորդը։ Ձեր որդին հարվածում է Ջորջին և վնասում նրա հոնքը։ Իսկ հետո հանկարծակի ինչ-որ բան խշրտած, և Արթուրն զգաց, որ վարսակալն իր ձեռքում է. նա ետ նետվեց, փակեց պատուհանը և բարձրացավ ձեր սենյակը։ Միայն այնտեղ նկատեց, որ ապարոշը ծռված է, և փորձեց ուղղել։ Այդ պահին էլ դուք մտաք:

— Աստված իմ։ Աստված իմ, — շնչահեղձ լինելով կրկնեց դրամատան տերը:

— Արթուրը ցնցված էր ձեր անարդարացի մեղադրանքից։ Չէ որ, ընդհակառակը, դուք պետք է շնորհակալություն հայտնեիք նրան։ Նա չէր կարող ձեզ ճշմարտությունն ասել, առանց մատնելու Մերիին, չնայած վերջինս արժանի չէր ներողամտության։ Արթուրն իրեն պահեց ասպետի պես և թաքցրեց գաղտնիքը:

— Ահա թե ինչու Մերին ուշաթափվեց, երբ տեսավ վարսակալը, — բացականչեց միստր Հոլդերը։ — Աստված իմ, ինչ անմիտն եմ ես։ Չէ որ Արթուրը խնդրեց իրեն բաց թողնել գոնե հինգ րոպեով։ Խեղճ տղան մտածում էր կռվի վայրում փնտրել վարսակալի կոտրված մասը։ Ինչպես եմ սխալվել:

— Ձեր մոտ գալով, — շարունակեց Հոլմսը, — առաջին հերթին ուշադիր նայեցի տան կողամասը, հույս ունենալով ինչ-որ բան հայտնաբերել։ Երեկ գիշերվանից ձյուն էր տեղացել, իսկ ուժեղ ցուրտը լավ է պահպանում ձյան վրայի հետքերը։ Ես անցա մթերք բերելու ճանապարհով, բայց այն կոխկրտված էր։ Խոհանոց տանող դռնից ոչ հեռու կնոջ հետք նկատեցի, կնոջ կողքին տղամարդ էր եղել կանգնած։ Կլոր հետքը ցույց էր տալիս, որ նրա մի ոտքը փայտից է։ Հավանաբար, ինչ-որ մեկը խանգարել էր նրանց խոսակցությունը, քանի որ կինը վազել էր դռան կողմը։ Կնոջ կիսակոշիկների թաթերն ավելի խորն էին դրոշմված, քան՝ կրունկները։ Փայտե ոտքով մարդը մի փոքր սպասել էր, իսկ հետո հեռացել։ Տեղնուտեղը մտածեցի, որ դրանք պետք է սպասուհին և նրա երկրպագուն լինեին, որոնց մասին պատմել եք դուք։ Այդպես էլ պարզվեց։ Անցա այգի, բայց այլևս ոչինչ չնկատեցի, բացի անկարգ, բոլոր կողմերը ձգվող հետքերից։ Դրանք ոստիկանների հետքերն էին։ Բայց երբ հասա ձիանոց տանող ճանապարհին, այդ գիշերվա ամբողջ բարդ պատմությունը բացվեց իմ առաջ, կարծես գրված էր ձյան վրա։ Ես տեսա երկու հետք. մեկը պատկանում էր կոշիկներով մարդուն, մյուսը, որը բավականությամբ նկատեցի, ոտաբոբիկ վազող մարդու։ Հավատացած էի, որ երկրորդը ձեր տղայի հետքերն են։ Առաջին մարդը հանգիստ քայլել էր այդ ուղղությամբ, մյուսը՝ վազել։ Վազողի հետքերը դրոշմվել էին այնտեղ, որտեղով գնացել էր առաջինը։ Դրանից կարելի էր եզրակացնել, որ երկրորդ մարդը հետապնդել էր առաջինին։ Գնացի կոշիկներով մարդու հետքերով։ Դրանք ինձ բերին ձեր հյուրասենյակի պատուհանի մոտ. այստեղ ձյունը տրորված էր, ակներև էր, որ այդ մարդը ինչ-որ մեկին երկար սպասել է։ Այդ ժամանակ նրա հետքերով գնացի հակառակ ուղղությամբ։ Դրանք ճանապարհով ձգվում էին մոտավորապես հարյուր յարդ։ Հետո կոշիկներով մարդը շրջվել է, այդտեղ ձյունը շատ ուժեղ տրորված էր, կարծես մենամարտ էր տեղի ունեցել։ Ձյան վրայի արյան հետքերը վկայում էին, որ դա այդպես էլ եղել է։ Հետո կոշիկներով մարդը նետվել էր փախուստի։ Որոշ տարածության վրա նորից արյան հետքեր նկատեցի՝ ուրեմն վիրավորը հենց նա էր։ Արահետով գնացի ընդհուպ մինչև ճանապարհը, այնտեղ ձյունը մաքրված էր, և հետքերը ընդհատվեցին:

Դուք հիշում եք, որ տուն մտնելով, խոշորացույցով զննեցի հյուրասենյակի պատուհանի գոգն ու շրջանակը և հայտնաբերեցի, որ ինչ-որ մեկը դուրս է սողացել պատուհանից։ Նկատեցի նաև կեղտոտված ոտքի ուրվագիծը, այսինքն ոտաբոբիկ մարդը ետ է եկել։ Դրանից հետո արդեն ի վիճակի էի պատկերացնել այն ամենը, ինչ կատարվել էր։ Ինչ-որ մեկը կանգնել էր պատուհանի մոտ և ուրիշ մեկը նրան էր տվել վարսակալը։ Ձեր որդին տեսել էր դա, նետվել էր անծանոթին հետապնդելու և կռվել էր հետը։ Նրանցից ամեն մեկը գանձը ձգել էր իր կողմը։ Այդ ժամանակ էլ մի կտոր

պոկվել էր վարսակալից։ Արթուրը վարսակալով տուն էր շտապել՝ չնկատելով հակառակորդի մոտ մնացած կտորը։ Առայժմ ամեն ինչ հասկանալի է։ Բայց հարց է ծագում. ո՞վ է այն մարդը, որ կռվել է ձեր որդու հետ և ո՞վ է տվել նրան վարսակալը։

Իմ հետաքննության հին սկզբունքն այն է, որ բացառեմ բոլոր անհավանական ենթադրությունները։ Այդ դեպքում ինչ մնում է, դա էլ հենց հանդիսանում է ճշմարիտը, որքան էլ անհավանական թվա։

Մոտավորապես այսպես էի դատում. բնականաբար, վարսակալը դուք չէիք տվել։ Ուրեմն, մնում էին ձեր ազգականուհին և սպասավորները։ Բայց եթե հափշտակմանը մասնակից էին ձեր սպասավորները, ապա հանուն ինչի՞ էր լռում ձեր որդին։ Նման ենթադրության համար հիմքեր չկան։ Դուք ասում էիք, որ Արթուրը սիրում է իր ազգականուհուն։ Եվ ինձ համար պարզ դարձավ նրա լռության պատճառը. նա չէր ցանկանում մատնել Մերիին։ Այն ժամանակ հիշեցի, որ դուք նրան գտել եք պատուհանի մոտ, և նա Արթուրի ձեռքին տեսնելով վարսակալը, կորցրել է գիտակցությունը։ Ենթադրություններս փոխարկվեցին վստահության։

Բայց ո՞վ է նրա մեղսակիցը։ Իհարկե, դա կարող էր լինել միայն սիրեցյալը։ Միայն նրա ազդեցության տակ կարող էր այդպես հեշտությամբ մոռանալ, որ պարտական է ձեզ։ Գիտեի, որ դուք քիչ եք լինում հասարակության մեջ, և ձեր ծանոթների շրջանակը սահմանափակ է։ Բայց դրանց՝ այդ փոքրաթիվ ծանոթների մեջ է սըր Ջորջ Բերնվելը։ Առաջ էլ էի լսել նրա մասին, որպես կանանց նկատմամբ թեթևամիտ վերաբերմունք ունեցող մարդու։ Ակներև է, որ նա է կանգնած եղել պատուհանի մոտ և միայն նրա մոտ պետք է փնտրել կորած բյուրեղաքարերը։ Արթուրը ճանաչեց նրան, բայց, այնուամենայնիվ, Ջորջը իրեն համարում էր անվտանգության մեջ, հավատացած լինելով, որ չանվանարկելու համար սեփական ընտանիքը, ձեր որդին կլռի։

Դե, իսկ այժմ տարրական տրամաբանությունը ձեզ կհուշի, թե ինչ ձեռնարկեցի ես։ Թափառաշրջիկի շորեր հագնելով մեկնեցի սըր Ջորջի մոտ։ Ինձ հաջողվեց ծանոթանալ նրա սպասավորի հետ, վերջինս հայտնեց, որ իր տերը նախօրեին ինչ-որ տեղ արնոտելու աստիճան վնասել է գլուխը։ Վեց շիլինգով ինձ հաջողվեց նրանից ձեռք բերել սըր Ջորջի հին կոշիկը, որով ուղեվորվեցի Սթրիթեմ և համոզվեցի, որ դրանք ճիշտ համապատասխանում են ձյան վրայի հետքերին։

— Երեկ երեկոյան արահետի վրա ինչ-որ թափառաշրջիկ տեսա, — ասաց միստր Հոլդերը։

— Միանգամայն ճիշտ է։ Այդ ես էի։ Ես հասկացա, որ սըր Ջորջը ձեռքումս է։ Մեծ նրբազգացողություն էր հարկավոր, որպեսզի հաջողությամբ ավարտեի գործն ու խուսափեի հրապարակումից։ Այդ խորամանկ սրիկան հասկանում էր, թե ինչպես են կապված ձեր ձեռքերը։

Տուն վերադառնալով փոխեցի հագուստներս և մեկնեցի սըր Ջորջի մոտ։ Սկզբում, իհարկե, նա ժխտեց, բայց երբ մանրամասն պատմեցի, թե ինչ է կատարվել այդ գիշեր, սկսեց սպառնալ ինձ և նույնիսկ հափշտակեց պատից կախված գավազանը։ Ես գիտեի, ում հետ գործ ունեմ և ակնթարթորեն ատրճանակը դեմ տվի քունքին։ Այդ ժամանակ խելոքացավ։ Ես հայտարարեցի, որ մենք համաձայն ենք նրանից հատը հազար ֆունտով քարերը ետ գնել։ Այդ ժամանակ էլ առաջին անգամ ցուցաբերեց հուսահատության նշաններ։

— Գրողը տանի։ Ես արդեն երեք քարերն էլ տվել եմ վեց հարյուր ֆունտով, — բացականչեց նա։

Սըր Ջորջին խոստանալով, որ նրա դեմ դատական գործ չի հարուցվի, իմացա գնորդի հասցեն, մեկնեցի այնտեղ ու երկար սակարկելուց հետո նրանից ետ գնեցի քարերը, յուրաքանչյուրին վճարելով հազար ֆունտ։ Հետո գնացի ձեր որդու մոտ, բացատրեցի նրան, որ ամեն ինչ կարգին է, և գիշերվա ժամը երկուսին ծանր աշխատանքից հետո հասա տուն։

— Ձեր շնորհիվ Անգլիայում ամոթաբեր կռիվ չի պայթի, — բազկաթոռից բարձրանալով ասաց դրամատան տերը։ — Սըր, ես խոսք չեմ գտնում երախտագիտությունս արտահայտելու։ Բայց հավատացած եղեք, որ չեմ մոռանա այն, ինչ արեցիք ինձ համար։ Ձեր արվեստը գերազանցում է ցանկացած երևակայությունը։ Իսկ հիմա կշտապեմ թանկագին որդուս մոտ և նրանից ներողություն կխնդրեմ, որ այդպես եմ վարվել։ Ինչ վերաբերվում է խեղճ Մերիին, ապա նրա արարքը խորապես ցնցեց ինձ։ Վախենում եմ, որ նույնիսկ դուք ձեր հարուստ փորձով չեք կարողանա գտնել նրան։

— Վստահորեն կարելի է ասել, — առարկեց Հոլմսը, — որ նա հիմա այնտեղ է, ուր և Ջորջ Բերնվելը։ Անկասկած է նաև, որ ինչպես էլ գնահատեք ձեր ազգականուհու արարքը, նա շուտով կպատժվի։